

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ ՊԵԿ-ՄԱԾՁԲ-2019/11 ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի թիվ 2/14 հասցեում ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների միասնական սպասարկման կենտրոնի կառուցման աշխատանքների (1-ին փուլ 2-րդ մաս) կատարման նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման գահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 11.10.2019թ. N 666/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 14.10.2019թ. ժամը 17-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում: Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ն.Մնոյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Գրիգորյանը, Կ.Բայբուրյանը և քարտուղար Ս.Հարությունյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

- ՀՀ ՊԵԿ-ՄԱԾՁԲ-2019/11 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ն.Մնոյանը տեղեկացրեց, որ ՀՀ ՊԵԿ-ՄԱԾՁԲ-2019/11 ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգին մասնակցելու համար ՀՀ կառավարության սեպտեմբերի 9-ի N 1253-Ն և հոկտեմբերի 10-ի N 1374-Ն որոշումների համաձայն 14.10.2019թ. էլեկտրոնային փոստի միջոցով հրավեր էր տրամադրվել՝ «ԱՏՐԻՈՒՄ ԹԻՄ» ՍՊԸ-ին (Ք. Երեվան, Հ.էմին փող. 80 շենք 26 բնակարան, էլ. փոստ՝ hayk.dallakyan@gmail.com):
- ՀՀ ՊԵԿ-ՄԱԾՁԲ-2019/11 ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին «ԱՏՐԻՈՒՄ ԹԻՄ» ՍՊԸ-ն ներկայացրել է հայտ:
- քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:
- գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ «ԱՏՐԻՈՒՄ ԹԻՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և դրանք կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան:

Մասնակցի կողմից առաջարկված գինը հետևյալն է.

«ԱՏՐԻՈՒՄ ԹԻՄ» ՍՊԸ

Չափաբաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Առաջարկված ընդհանուր գինը՝ առանց ԱԱՀ-ի	Առաջարկված ընդհանուր գինը՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ	Նախահաշվային գինը
1	Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի թիվ 2/14 հասցեում ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների միասնական սպասարկման կենտրոնի կառուցման աշխատանքների (1-ին փուլ 2-րդ մաս) կատարման նկատմամբ հեղինակային հսկողության ծառայություններ	4400000	4400000	4718000

գնահատող հանձնաժողովը որոշեց՝


1. «ԱՏՐԻՈՒՄ ԹԻՄ» ՍՊԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:
2. Հաշվի առնելով, որ հանձնաժողովի նիստին ներկա էր «ԱՏՐԻՈՒՄ ԹԻՄ» ՍՊԸ-ի տնօրեն Ռ.Մալումյանը, գնահատող հանձնաժողովը որոշեց գնման հրավերի 7.5 կետի 1-ին մասի պահանջներին համապատասխան «ԱՏՐԻՈՒՄ ԹԻՄ» ՍՊԸ-ին հրավիրել մասնակցելու գների նվազեցման համար բանակցությունների: Բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտին «ԱՏՐԻՈՒՄ ԹԻՄ» ՍՊԸ-ն իր գնային առաջարկը թողեց անփոփոխ:

3. Որպես բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «ԱՏՐԻՈՒՄ ԹԻՄ» ՍՊԸ-ին՝ ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

4. Գնահատող հանձնաժողովի նախագահ Ն.Մնոյանը ներկայացրեց հանձնաժողովի անդամների կողմից իրականացված հայտի գնահատման արդյունքները /գնահատման թերթիկները կցվում է/, որի հիման վրա հանձնաժողովը որոշեց՝ -առաջին տեղը զբաղեցրած «ԱՏՐԻՈՒՄ ԹԻՄ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից և ներկայացնել առաջարկ ընտրված մասնակցին՝ պայմանագիր կնքելու համար:


Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝



Ն.Մնոյան

Անդամներ՝



Ա.Գրիգորյան



Կ.Բայբուրյան

Քարտուղար՝



Ս.Հարությունյան